

ՇԻՐԻՄՔ ԱՆՄԱՇՀ ԲԱՐԵՐԱՐԱՑՆ

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ԶԱՄԳԵԱՆԻ ԵՌԱՀԱՏՈՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Որպէս յիշատակեալ եմ յէջս անգլիացն նորատիպ Պատմութեան իմում ըզ-Հայոցն Հնդկաստանեայց¹, Հայք լեալ են հիմնադիրը կալկաթա մեծահռչակ քաղաքիս յակզբան ժիշտ դարուն: (Տեսանել և «Բազմավէպ», վասն Մարտ-Յուլիս, 1936, էջ 94-96):

Ի գալն անգլիացւոց աստ, ընդ ղեկավարութեամբ Ջօր Զարնակի, յամին 1690, եկին և մտին ընդ հավանաւորութեամբ նոցին և լուսիտանացիք, ըստ մեծի մասին խառնածինք, ի Բանդէլ կոչեցեալ քաղաքէն, ուր ունէին եկեղեցի մի կառուցեալ յամին 1599, և որ կայ և մնայ ցայսօր, թէպէտ և վերաշինեալ և ընդարձակեալ յամին 1640:

Նորեկ լուսիտանացիք կառուցին ի կալկաթա մատուռ մի փոքրիկ, յամին 1700, ծախիւց բարեպաշտօն կնոջ ուրում՝ Մարտա Տէնչ անուն, որոյ երկոտասանամեայ դուստրն էր առաջին ննջեցեալն որ ամփոփեցաւ անդ, յամին 1712: Մատուռն գոլով փոքրիկ վասն աճող կաթոլիկ՝ հասարակութեանն, ընդարձակեցաւ այն յամին 1720, ծախիւց ուրումն բարեպաշտի, Տիկին Սեբաստիան Շահ անուն: Յետ կիսոյ դարու անհրաժեշտ եղեւ դարձեալ ընդարձակել զեկեղեցին, ուստի յամին 1797, քանդեցին զնախին եկեղեցին և կառուցին հոյակապ և ընդարձակ աղօթավայր մի որ կայ և մնայ ցայսօր ժամանակի և է մայր եկեղեցի կաթոլիկացն բնակելոց ի

քաղաքիս մեծի, գոլով ի նմին ժամանակին և վանք նոցին: Եկեղեցին օծաւ ի 27 Նոյեմբերի 1799 ամին, և նուրբեցաւ յանուն Սրբուհոյ Աստուածածնի: Գտանի եկեղեցին առ երի նազարեթայ Հայոց եկեղեցւոյն կառուցեալն յԱղայ Նազարայ Շոր-Ջուղայեցւոյ, մեծահամբաւ հայ վաճառկանին, յամին 1724, և է զարդիս հնագոյն սրբավայրն ի կալկաթա, և ի սրահի այնր գտանի և հնագոյն շիրիմն ի քաղաքի աստ, ի յիշատակ հայ կնոջ ուրումն, հանգուցելոյ յամին 1630. (Տեսանել «Բազմավէպ» վասն Մարտ-Յուլիս, 1936 ամին, էջ 95):

Եթէ զրեցի զհամառոտ պատմութիւն հիմնարկութեան հինաւորց և պատմական եկեղեցւոյն կաթոլիկաց, այդ այնու պատճառաւ էր զի գտանին յայդիկ եկեղեցւոյն ինկելի շիրիմը Հայ ննջեցելոց, թուով մետասան, թէպէտեւ լեալ են ի հնումն աւելի քան զայդ, այլ դժբախտաբար անհետացեալ են այնորիկ ի ժամանակի շինութեան նոր եկեղեցւոյն, յամին 1797-1799: Զկայ այսօր շիրիմ Հայր Սուրբիայ Աղամալեան, ի Միտիթարեան միաբանութենէ վենետիկոյ, որ հանգեաւ ի Տէր, աստ ի կալկաթա², և ամփոփեցաւ յեկեղեցւոյն կամական յայնիկ, մեծաւ և փառաւոր հանդիսիւ, յայնիկ, մեծաւ և փառաւոր հանդիսիւ, յայնիկ 18 մարտին 1789 ամին: ի սրահի եյլ 18 մարտին 1789 ամին: ի սրահի եկեղեցւոյս կայ և դամբարան կարապետի կարտիչն առ կուլի մի յանուն սուրբ Աւելիսի 1901 (յէջ, հրտ. յ200ամեայ յորելինի Սիլիս. Ուիտիս, 1938) — ԽԱՅՈԹ. ԽԱՅՈԹ. ԱՊՐԻԼ-ՄԱՅԻ 1938

1. Armenians in India, from the earliest times to the present day, by Mesroob J. Seth, M. R. A. S. Calcutta. 1937. Published by the author at No. 9, Marsden Street. Price 15 shillings.

2. Հ. Ցովէաննէսի միք թումանանեան ի կենապու

մետասան փառաւոր շիրմացն որը կան ընակցաց նոցին Նոր-Ջուղայեցւոց զարմացիր, զի զրգեալ ի կրից չար նախանձու և դառն ատելութեան և կուրացեալ մուլեանդութեան կործանարար ախտիւ, եւլին նզովեցին զտոհմն Շահրիմանեանց. իսկ վասն որ յանցանաց նոցին արդեօք, միայն թէ վասն կաթոլիկէ զաւանութեանն որում պատկանէին նորա, սկսեալ ի Հին-Ջուղայէն: Շահրիմանեանը գոլով դաւանակից Հոռվմէական եկեղեցւոյ, զօրավիգ պաշտպանը և ջատագովզ հանդիսանային օտարազգի կաթոլիկ հոգեւորականացն, որը եկեալ՝ վանս, եկեղեցիս և զպրոցս հաստատեալ էլին թէ յԱպահան¹ և թէ ի Նոր-Ջուղա², յայն սակա նզովից ենթարկեցան և հալածեցան ի հայրենակցաց իւրեանց Լուսաւորչականաց:

Օրհնեալ եղիցին յիշատակը անմահ և ոսկեծեռն բարերարացն: Խոնկովք անուշաշիր և դափնեօք անթառամօք պաշտեցին շիրիմը մեկենասացն որը ետուն անզուգական և անզերազանցելի պատմութիւն պաշտելի նախահարց իւրեանց:

Օրհնեալ եղիցին և քաղցր յիշատակը ազնուազարմ և քաջատոհմիկ Շահրիմանեանց, որը ուր և զնացին փայլեցան և փայլեցուցին զանուն Հայութեան յասպարիզին վաճառականութեան, մեծազործութեամբը իւրեանց և հայկական բնածին հանձարով իսկ, թէ ի վենետիկ, թէ ի Վիեննա և թէ ի Լիվոնոյ, ի Տիգիս, և ի Մուկով, յԱմսդերտամ և թէ աստ ի կալկաթա և անդ ի Մարտաս Հնդկաց:

Այլ դու եկ և ընդ տղիտութիւն հայ-

1. Գտանին յԱպահան մայրաբաղան երեք, կառուցեալ ի հետազայ կարզաց.

ա. - Լուսիտանացի Օգոստինիան (Augustinian Lusitani) ի թաղն Հիւսէնիս:

բ. - Բոկոսն Կարմելիտանց (Carmelitani discalceati) ի թաղն Հիւսէնիս:

գ. - Կապուչինանց (Capucini) ի թաղն Ղաւաթարութեարաց:

3. Իսկ ի Նոր-Ջուղա, զտանէն նոյնպէս երեք եկեղեցիք կամ վանք որը էին ըստ հետազայ կարզին:

ա. - Յիսուսանց (Societas Iesu) յանուն սրբոյն Յովանիացիայ:

բ. - Բոկոսն Կարմելիտանց (Carmel. discalceati) յանուն սրբոյն Եղիայի:

գ. - Դոմինիկնեանց (Dominicani):

կայը և եկեղեցի մի յանուն սուրբ Աւելիսաց, կարուց ի Շահրիմանեանց, առընթերապատրիս, զմաց սակայն զերծ և ազատ յերկնասար պատուաչասից, զի յամին 1697,

հրաւիրանօք եպիսկոպոսացն Մայր Աթոռոյն Հայաստանաց, որը անկանէին յարեւելեան կողմին նազարայ պահպանութեան, ըստ օրինակի սրբազն հայութաւացն Տիեզերական ժողովոյն որը նզովեցին զԵնասոր և զայլ աղանդաբար և ժողովրդասէր, հովիր բաշ որ դէ զանձն ի վերայ փոքրիկ հօտին:

3. Ստեփաննոս եպիսկոպոս Նոր-Ջուղայեցի որ նզովեց գտունն Շահրիմանեանց, ըստ օրինակի սրբազն հայութաւացն Տիեզերական ժողովոյն որը նզովեցին զԵնասոր և զայլ աղանդաբար և ժողովրդասէր, հովիր բաշ որ դէ զանձն ի վերայ փոքրիկ հօտին:

4. Ստեփաննոս եպիսկոպոս Նոր-Ջուղայեցի Ավրութեանց (Dominicani):

կայը և եկեղեցի մի յանուն սուրբ Աւելիսաց, կարուց ի Շահրիմանեանց, առընթերապատրիս, զմաց սակայն զերծ և ազատ յերկնասար պատուաչասից, զի յամին 1697, հրաւիրանօք եպիսկոպոսացն Մայր Աթոռոյն Հայաստանաց, որը անկանէին յարեւելեան կողմին նազարայ պահպանութեան, ըստ օրինակի սրբազն հայութաւացն Տիեզերական ժողովոյն որը նզովեցին զԵնասոր և զայլ աղանդաբար և ժողովրդասէր, հովիր բաշ որ դէ զանձն ի վերայ փոքրիկ հօտին:

կանօք կրելով շուրջառ և սեւացեալ մո-
մեղնս, եկեալ հաւացեալ ի հրապարակն
Մէյտան կոչեցեալ, որ ի Մէծն Մէյտան
թաղին, կատարեցին անդ թափօր անի-
ծողական, մէծաւ հանդիսիւ, կուտելով
նզովս և անէծս ի վերայ ազնիւ տոհմին
Շահրիմանեանց, և ի հարցանել պարսից
թէ զի՞նչ գործէին, անամօթաբար պա-
տասիսնէին թէ որպէս զուք զՈօննի հեր-
ծուածողն, նոյնպէս և մեց զմեր հեր-
ծուածողն նզովելով նզովեմք: Այս տխուր
պատահար տեղի կալաւ յամին 1659:

Ժեսեալ Շահրիմանեանց զդառն հակա-
ռակութիւն հայրենակցացն իւրեանց, լքեալ
զԵռ-Զուղա, հեռացան և գնացին պան-
դըստել յօտար երկիրս, այն է ի Հնդիկս,
յիտալիս, ի Հոլանտա, յԱւստրիա և ի
Ռուսաստան:

Զգտանին այսօր ի Նոր-Զուղա սերունդը
և շառաւիղը Շահրիմանեանց, միակ յիշա-
տակ նոցա որ դեռ կայ և մնայ անդ, է
հոյակապ քարաշէն բաղանիքն որ ի թաղն
Մէծ Մէյտան, կառուցեալ արդեամբ և
ծախիւք բարեպաշտ կնոջ ուրուք ի Շահ-
րիմանեան պայազատ տոհմէն, 300 ամօք
յառաջ:

Կայ անդ ի Մատրաս Շահրիման ոմն
որ յաճախէ յեկեղեցի Հայոց և ի ծերու-
թեան հասակի սկսեալ է ուսանել զլեզու
բարեյիշատակ նախահարցն: Ի սրահի ե-
կեղեցւոյն Հայոց որ ի Մատրաս, գտանի
փառաւոր շիրիմ « Ամենապայծառ Յով-
հաննիսի կոմսին Շահրիմանեանց », որ

չար հօրն մերոյ որրոյ Լուսաւորչին, զի հզօր կուսակիցը
Նահապեաի մատնեցին զկաթողիկոսացուն Ստեփանոս
ի ծեռա պարսիկ իշխանին որ նստէրն յԵրեւան, որ
կալեալ զնա արկ ի բանս խաւարին, ուր յան բազում
խոշտանցանց վարեց զկեանս իւր ի 4 Ցունուարին,
1698 ամին: Ուրե փորեն զուք վամ այլոց, անկանին
ի նմին ինքեանք վաղ կամ անազան: Վարեց նա բզ-
պաշտօն առաջորդութեան վանացն Ամենափեկեան ի
Եռ-Զուղա ի 1634 ամէն ցամին 1697:

1. Աէթ Սամ, ակնաւոր հայ վաճառական ի Մա-
տրաս, որ երբեմ « վառաց մեր մայր » կուչեր, էր պաշտ-
պան և աշխատակից « Աղդարար » անդրանիկ լրագրոյն
ազգիս, որ հրատարակեցան ընդ խմբագրութեամբ Տէր
Յարութիւնի Շմաւնեան շիրացուուածան:

զրաւեցաւ ի կենաց ի 5 Ապրիլին, 1848
ամին, ի հասակի 75 ամաց: Եկեալ էր
նա ի Մատրաս ի վիեննայէ, որպէս պատ-
մեաց ինձ, 40 ամօք յառաջ, ի Տէր հան-
գուցեալ բարեկամ իւր Գրիգոր Սամ, որ
էր թոռն Սեթայ Սամեան¹ և հնագոյն հայ
բնակիչ Մատրասի:

« Ամենապայծառ կոմսն Յովհաննէս Շա-
հրիման » յընթացս երեսնամեայ բնակու-
թեանն ի Մատրաս թէպէտեւ յաճախեալ
էր յեկեղեցիս կաթոլիկաց, այլ չէր բնաւ
հաղորդեալ արեան և մարմոյ կենարարին
յեկեղեցւոյն նոցա, և յորժամ մեռաւ ան-
հաղորդ, արքեալիսկոպոսն կաթոլիկաց
բացէ ի բաց մերժեաց թաղել զնա, և թէ-
պէտեւ խոստացան ազգականը կոմսին
վճարել արքեալիսկոպոսին մի հազար ոու-
փեաց վասն տեղագնոյ յեկեղեցւոյն կա-
թոլիկաց, այլ նա դարձեալ մերժեաց, ա-
սելով, եթէ վճարեսցեն նոքա զամբողջ
հարստութիւն նորա, դեռ չկարեն թաղել
տալ զկոմսն մհծահարուստ ի ձեռն կա-
թոլիկ քահանայից: Անձարացեալ ազգա-
կանացն զնան և դիմեն վիճակաւոր քահա-
նային Մատրասի հայոց որ ամենայն սիրով
և յօժարութեամբ յանձն առնու թաղել
զննչեցեալն ի սրահի եկեղեցւոյն Մատ-
րասի, և շնորհապարտ ազգականը կոմսին
նուիրեն բարեմիտ քահանային զզումարն
200 ոուփեաց:

* * *

Ի գիտութիւն բանասիրաց չմոռանամ
յիշել աստանօր թէ ի բազում ամաց հետէ

ցամին 1796ի Մատրաս: Վաճառական զրէք
ոտանաւոր բանս իրատական ընդ « Բարեկամ » կեզծ
անուամբ: Մեսաւ յամին 1848, յ19 Յունիսի, ի հասա-
մանաւոր կեզծ ամաց յամենցունց, մանաւանդ ի
կի 77 ամաց, որպացեալ յամենցունց, մանաւանդ ի
կի հին բարեկամէն իւրմէ ի Մեսրոպայ թաղեա-
զրական հին բարեկամէն իւրմէ ի Մեսրոպայ յիւրում « Աղդա-
րատեան » լրազրին երկար ողբ մի սրտառուչ և
Արարատեան » լրազրին երկար ողբ մի սրտառուչ և
կեղեցիկ ի լեզու ոսկեզն, ընդ վերնազրաւ « Ուղ ի
կեղեցիկ ի լեզու ոսկեզն, ընդ վերնազրաւ « Ուղ ի
Աէթ Սամ », յորում բերթողն անզուզական, ի միջեթ
այլոց, դրուատէ զԱէթ Սամ, այսպէս:

« Ընդ իսութեան եթէ զեկու կայ Յահան Զրպետեան,
Ուր յեղերաց Հոսն զետոյ առ սէր եղեւ ապաստան,
Վասն ազգիս և հայրենեաց, որով թուիմ թէ հասա-
գածարաւ հայրենասէր սրտին անյազ բաղանաց »:

Հաւաքեալ և շտեմարանեալ ունիմ ճոխ
հում նիւթս վասն պատմութեան պայա-
զատ տոհմին Շահրիմանեանց, զոր հրա-
տարակեցից ի մօտ ապագային, եթէ սա-
կայն կամք իցեն երկնից և ինձ յաւա-
գարիս իսկ կեանք:

Հայ և լատին արձանազրութիւնըն ի
վերայ շիրմաց հայ ննջեցելոցն, յեկեղե-
ցւոյ կաթոլիկաց որ ի Մուրզիհաթթա թա-
ղին քաղաքիս, են ըստ հետազայ օրինակի.

1. Hic Armenus Leo nomine dictus ad quem mors ipsa facta Leo Nazareth patri meo Persaequae patriae meae tollere non parcit, annos sexaginta natus Sacramentis munitus jaceo appositus ad patres. Lector aliorum fata meditans disce vita fungi; sic namque totum geritur recte negotium. Anno 1734.

Զկայ տապանագիր ի հայ լեզու, իսկ
լատին արձանազրութիւնն թարգմանի
այսպէս:

Աստ հանգիմ յաւելեալ առ Հարս իմ
զօրացեալ խորիթովք ես հայազն վաթմնա-
մեայ անուն Լեւոն կարդացեալ, առ որ
մահն ինքնին առիւծ երեալ ոչ խնայեաց
խել ի հօրէ իմմէ Նազարեթայ եւ ի հայ-
րենեաց իմոց Պարսից: Ըսթերցող, որ խո-
կաս զվախնան այլոց, ուսիր վարել զկեանս.
զի այսպէս կատարի ուղղութեամբ ամենայն
գործ (կենաց): Յամին 1734:

2. Hic jacet Sarkis de Agavelly na-
tione Armenianus in Persia natus qui
aetatis suae annum 48 attingens in pace
quiescit die 7 Februarii Anno Christi
1736.

Այս է տապան Ալավալէ որդի:
Ազնուագունեղ Սարգսին¹ որ հանգեալ
ի Քրիստոս թիվն 1736, Ավլան 11:

1. Կայ յեկեղեցւոյն Հայոց ի Մատրաս, շիրմէ Սարգ-
սի ուրում Աղդամեանց, որ զրաւեցաւ ի կենաց ի 16
Կոյեմրերի 1816. « Ծնեալ ի տոհմէ բարեպաշտ ծնողաց
ի Բասրայ քաղաքի » յամին 1745.

Սա էր տպարանապետ ի Մատրաս և ի տպարանէ
նորին ի լոյս եկին քանի մատեանը, սկսեալ ի 1809

3. Tristes hic jacent exuviae Emma-
nuelis Sarahatte natione Armeni, ex
illustri Xerimanorum stirpe in Persia
oriundi sed vera fide (quam ad obitum
usque integre servavit) magis laudandi;
licet aetatis flore, vigesimo scilicet octavo
raptus fuerit, attamen consumatus
in brevi explevit tempora multa;
placita enim erat Deo anima illius, propter
hoc properavit educere illum de me-
dio iniquitatum.

Aeternitatis laurea cum coronatus
mortem oppetiit die nona Martii 1738.

Աստ ամփոփի ի տապանի,
մարմին ումեմն բարեպաշտի,
որոյ անուն Սարհարդ կոչի,
որդի էր սա Մանուկիլի,
ազգ գոլով ջուղայեցի,
եւ ի տոհմէ Շէումանի,
ի աշխարհիս սա փոխադրի,
կոկիծ թողեալ իւրոյ տոհմի,
եւ ի թիվն ՈւծԶէ²:

Hic jacet Petrus Armenius et Catholicus qui ex patre nomine Izakan in Persida natus vitam finivit in Colcatta die 28 Octobris aere christiana 1742 annum ætatis suæ 50 attingens.

Այս է տապան Խախանի որդի Պետրոսին
թիվն փոկին 1742 Գամայ ամսին 23:

5. Here lyeth interred the body of Satur de Azarmal, son to Azarmal of the Armenian nation, born in the province of Julfa, in Persia, and of the Roman Catholic religion, aged 45 years, who departed this life on the 13th of May 1746.

Այս է տապան Ալավալէ որդի:

1

Ազնուագունեղ Սարգսին¹ որ հանգեալ
ի Քրիստոս թիվն 1736, Ավլան 11:

« Եկար իսկապէս ձեռով փորագրի
Տոհմ Աղդամեան Սարգսի Մատրաս »: 1809

2. Հայկական թուական 1187 համապատասխան է
Քրիչական 1738 ամին,

Թարգմանութիւն անզիւրէն տապանացրին է այսպէս:

Սստ ամփոփեալ կայ մարմին ծատուր¹ Ազարմալի, որդւոյ Ազարմալի յազգէն Հայոց, ծնեալ ի Զուղա գաւառին, ի Պարսկաստան, կրօնիւ կաթողիկէ, ի հասակի 45 ամաց, որ զբաւեցաւ ի կենաց յ'13 Մայիսին 1746:

6. Hic jacet corpus Ignacii Isaac de Sauquic Armenus natione naturalis ex Persia oriundus ex Civitate Julfa diem supremum obiit die trigesima mensis Maij. Anno Domini 1746.

Այս է տապան Զակիկենց Սահակի որդի Մինասին: Թիվն Փրկչին 1746, Թիվն փոքր 131. Աղամ երեսուն:

7. In isto tumulo jacet corpus defuncti Zacaria Xerimani natione Armeni (mercator) diem supremum obiit Colicatae die 26 Novembris. Anno 1754.

Զկայ Հայ տապանագիր, իսկ թարգմանութիւն լատիներէն հակիրճ տապանագիրն է այսպէս:

Ի տապանի աստ հանգչի մարմին հանգուցեալ Զաքարիա² Շահրիմանի, ազգաւ Հայ (վաճառականին) որ հանգեաւ ի Կալկաթա ի 26 Նոյեմբերի, յամին 1754:

8. In isto tumulo jacet corpus defuncti Philipi Xerimani natione Armeni (mercator) diem supremum obiit Colicatae die 27 Octobris. Anno 1755.

Ներքյ տապանիս է հանգուցեալ ջուղայեցի Շերիմանենց Շերիմանի որդի Փիլիպոսին, ազգաւ հայ Վաճառական, Վաղնանեալ ի Կալկաթայ Թիվն Փրկչին 1755, Թիվն փոքր Աձի. Թիրայ Լ:

9. Hic jacet Joseph Bacarum Xerimani natione Armenius obiit die XI Junii. Anno Domini MDCCLXIII.

1. Ըստ ամենայն հաւանականութեան, որդի էր սա Աղամ Հազարմալի, ի Զախաթունեանց ազնիւ տոհմէն Նոր-Զուղայի, որ կառոյց զոյակապ զանգատունն Նազարեթայ Հայոց եկեղեցւոյն յամին 1734.

2. Հօրեղբայր էր սա Յովսեփայ և Զաքարիա Բա-

ի տապանի աստ ամփոփի, մարմին ումեմն բարեպաշտի, անուն սորա Յովսէփ կոչի որդի գոլով Բարաղամի, ազմիւ ազգէն Շերիմանեցի, ի Ըսպահանու ջուղայեցի, որ փոխեցաւ ի կենաց աստի, Թիվն 1763, Յունիսի 11:

10. Hic jacet Zacharias Xerimani natione Armenius, obiit die vigesima septima Novembris. A Domini MDCCLXIV.

Ի տապանի աստ ամփոփի մարմին ումեմն բարեպաշտի անուն սորա Զաքարիա կոչի որդի գոլով Բարաղամի ազմիւ ցեղէն Շերիմանեցի ի Ըսպահանու ջուղայեցի որ փոխեցաւ ի կենաց աստի Թիվն 1764, Նուեմբերի 27ումն:

Շերիմ սորա փառաւոր անկանի ընդաշմէ շերիմի Եղբուն Յովսեփայ, (Թիւ 9): Երկոբին շերիմն են յար և նման միմեանց, թէ ըստ չափու բարանցն և թէ ըստ ձեւոյ բանզակացն և զարդուցն որբ տեսանին ի զուլս արձանագրութեանցն, գեղեցկապէս փորագրեալ:

11. Մարմին Պարոն Գաբրիէլի, Բարեծնունդ Յովսիաննէսի, դնի յայսմ նաւեմ շիրմի, հոգին ապյօնաւ յերկինս փայլի, էր երկիւղած բարի արդար, անմեղ վարուլն անվթար, հեզ եւ ժուժկալ գերակատար, արքայութեան վարձուն սատար, տիֆօ վաթսուն եւ ութն ամաց, զընթացս կենաց կատարեաց, փոքր թուին Հայաստանեայց³. հարիւր վաթսուն վեց զուգընծաց վեցտասանն Աղամ ննջեաց:

Պաղամ Շահրիմանեանց որբ հանգեան ի Տէր յամին 1763 և 1764 և ամփոփեցն ի նմին եկեղեցւոյն: (Տիւ 9 և 10):

3. Փոքր թիւ Զուղայի, սկսաւ յամին 1615, որով բուշակն տապանագրիս (166) լինի 1781.

կայ և անձաշակ արձանագրութիւն մի ի լեզու լուսիտանացւոց, այսպէս:

Acuista sopultado o corpo de Gabriel Joannes nacao Armenio de idade LXVIII an... sonoual iadecao XI del anetroano domino MDCCLXXXII.

որ թարգմանի այսպէս.

Սստ Թաղեալ կայ մարմին Գաբրիէլի Յովսիաննիսեսն հայագին, ի հասակի 68 ամաց, յամի Տետոն 1782:

կայ ի նմին եկեղեցւոյն և տապանացր մի Հայ, Լատին և Յոյն արձանագրութեամբ, ննջեցեալն գոլով ազգաւ Յոյն և դաւանութեամբ կաթոլիկ:

Լատին տապանագիրն է այսպէս.

Hic jacet Georgius Johannis Drascoela nationis Graecus ex Philippopole. Anno Domini MDCCXXVIII die XX Augusti.

իսկ Հայ արձանագրութիւնն է ըստ օրինակիս ըստ այսմիկ:

Այս է տապանս Յօվսիսի որդի Զուղիւնին Դրասկոլու Փիլիպեցի, Թիվն Ուձձի, ՕՐՈՍՏՈՍԻ ի.

Այլ թէ ընդէ՞ր տեսանի և Հայ արձանագրութիւն ի վերայ տապանացարի օտար ննջեցելոյն, կարելի է թէ կին նորա և կամ կտակակատարն լեալ իցեն յազէս Հայոց, զի զայնու ժամանակաւ սակաւաթիւ Յոյն բնակիչը բաղարիս ունէին սերո յարաբերութիւն ընդ Հայս, յիրս տուրեւառութեան, որովհետեւ Հայը էին առաջնակարգ վաճառականը ի բաղարիս մեծի և Յոյն բարեկին զտուրեւառ իւրեանց հզօր աջակցութեամբ նոցին:

կայ ի նմին եկեղեցւոյն և շերիմ մի այլ Յոյն կաթոլիկ ննջեցելոյ՝ Նիկոլա Քրիստիանիտզա անուն, ծնեալ ի Թրանսիւլվանիա և վախճանեալ ի Կալկաթա յ'17 Օգոստոսին, 1713 ամին, ի հասակի 37 ամաց անկեղծ հաւատով յԱստուած և ուղիղ ի գործառնութիւնս ընդ մարդկան – vir sincereae fidei Deum et in

homines», ըստ լատին արձանագրութեանն: Հնագոյն շիրիմն յայդմիկ եկեղեցւոյն կրէ զթուականն 1712 և է ի յիշատակ երկոտասանամեայ դատեր ուրումն եղարարայ Ցէնզի, որոյ թարեպաշտոն կին, Մարիա Տէնջ, կառոյց զնախկին եկեղեցին յամին 1700, որպէս յիշատակեալ եմ արդէն յսկզբան զրութեանս:

Հրատարակելով աստ զՀայ տապանացրսն, որը ցարդ անձանօթ մնացեալ էին, նպատակ իմ լեալ է նախ փրկել զայնս ի մոռացութենէ, զի ոչ ոք ի հնոց և ի նորոց գիտէր զգոյութենէ նոցին, և յետոյ ի լոյս ածել զանուանս երկու ազգային թարերացն, զի Յովսէփ և Զաքարիա Շահրիմանեանը, որը ննջեցին զնինջն յաւկանից աստ ի կալկաթա ամին 1763 և 1764, (տեսանել զթիւս 9 և 10 արձանագրութեանցն) էին ոսկեծեռն Մեկենասը տպագրութեան Զամչեանի եռահատոր «Պատմութեանն Հայոց», ի ճակատի որոց տեսանին անուանը անմահ թարերացն յիշատակեալը այսպէս.

«Եմախիւր թարեպաշտոն և քաջատոհմիկ Շահրիմանեանց երկուց եղբարց հարազատաց՝ բարաղամեան Պարոն Յովսէփին և Պարոն Զաքարին»:

Որպէս զբէի երեխն՝ «եթէ լաւ և երջանկայիշատակ հայրենակիցը իմ պայազատ Շահրիմանեանը չէին Մեկենասը հանդիսացեալ տպագրութեան հսկայ և բազմացրտն աշխատութեան թարեյիշաւան աշխատութեան բարեյիշաւան Հօր, այսօր չկարէաց մեր պարծել ճոփի և մանրապատում ազգային Պատմութեամբ՝ յերիս մեծ հատորս»: (Տեսանել էջ թիւ, «Պատմութեան Հին Հայ Տարազին» Հայր Վարդան Հայունուոյ տըպագրեալ ի Վենետիկի, յամին 1924):

Հնութեանց հոյակապ Հնդկահայոց համեստ հետախոյդ:

Ժայռով Ջևառայ
Աղա - Հայունուոյ տըպագրեալ ի Վենետիկի, յամին 1938.